



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՎ

Շաբաթ, Մարտ 21-ը Սրբոց Քառասնից Մանկանց տոնն է, միաժամանակ Օրէնճ Քաունթիի մեր նոյնանուն եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Կիրակի, Մարտ 22-ին, Ս. Պատարագ պիտի մատուցանէ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ հաւատացեալներուն: Ս. Խորանին պիտի սպասարկեն Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Ս. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Ս. Հրանդ Քիւյ. Երեցեան: Ներկայ պիտի ըլլան նաեւ ժողովականութեան ներկայացուցիչները:

Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ ննջեցեալ բարերարներուն եւ նուիրեալ ծառայողներուն հոգիներուն համար տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, որմէ ետք պիտի կատարուի մատաղօրհնէքի արարողութիւն:

Ապա, եկեղեցւոյ «Ղուկասեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT FORTY MARTYRS CHURCH ON THE NAME DAY OF THE CHURCH

Saturday, March 21st, is the Feast of the Forty Martyrs, which is also the name day of Forty Martyrs Church in Orange County.

On this occasion, on Sunday, March 22nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Forty Martyrs Church. Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Hrant Yeretzyan will assist at the altar.

Following Divine Liturgy, the Prelate will preside over requiem services for departed servants of the church, and the blessing of *madagh*.

A reception will follow at the adjacent "Gugasian" Hall.

ՔԱԼԻՖՈՐՆԻՅՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆՂԱՄ ՔԵԻՆ ՏՂԵՈՆ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Քալիֆորնիոյ խորհրդարանի անղամ Քեյին Տղլէոն Ուրբաթ, 20 Մարտի յետմիջօրէին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Հանդիպումին ներկայ եղան Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, Ազգ. Կարչութեան անղամներէն իրաւաբար Լեւոն Կիրակոսեան, Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներ՝ Տիար Գարեգին Խանճեան, Տոքթ. Օննիկ Բէշիշեան եւ Տիկին Փաթիլ Արոշեան-Գասպարեան, ինչպէս նաեւ հիւր խորհրդարանականի գրասենեակի պատասխանատուներէն Տիկին Պայծառ Թովմասեան:



Այցելութեան
նպատակն էր
ծանօթանալ Ազգ.
Առաջնորդարանի
գործունեութեան: Այս
առիթով, ան նաեւ
Առաջնորդ Սրբազանը
պաշտօնապէս
հրաւիրեց
Քալիֆորնիոյ
խորհրդարանի 23
Ապրիլի նիստին, որ
յատկացուած է
Հայկական
Ցեղասպանութեան
յիշատակումին:

Խորհրդակցութեան նիւթ դարձան այժմեական հարցեր, ինչպէս նաեւ Քալիֆորնիոյ հայութիւնը յուզող խնդիրները: Նշենք, որ հիւր խորհրդարանականին ընտրաշրջանին մաս կը կազմէ Հոլիվուտի «Փոքր Հայաստան» գօտին:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով ծանօթութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ տարուող աշխատանքներուն մասին: Ան նաեւ գոհունակութիւն արձանագրեց, որ Քալիֆորնիոյ ժողովուրդին ներկայացուցիչները համախմբող խորհրդարանը արդար մօտեցում կը ցուցաբերէ Հայ ժողովուրդի իրաւունքներուն նկատմամբ ու ամէն տարի յատուկ նիստով կ'ոգեկոչէ Ցեղասպանութեան զոհերուն յիշատակը: Հիւր պետական անձնաւորութիւնը, իր կարգին, անհրաժեշտ նկատեց այս ու այլ հարցերու գծով գործակցութեան սերտացումը, յատկապէս վեր առնելով նոր սերունդի առողջ դաստիարակութեան հրամայականը:

Հրաժեշտ պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց խորհրդարանականին:

CALIFORNIA STATE ASSEMBLYMEMER KEVIN DE LEON VISITS THE PRELACY

On the afternoon of Friday, March 20th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate welcomed to the Prelacy California State Assemblymember Kevin De Leon. Participating in the meeting were Executive Council member Mr. Levon Kirakosian, Esq., representatives from the Armenian National Committee Mr. Karekin Khanjian, Dr. Onnik Keshishian, and Mrs. Patsy Aposhian-Kasparian, and Senior Field Representative for Assemblymember De Leon Mrs. Baydzar Thomasian.



The purpose of the meeting was for the Prelate and guest to become better acquainted with the endeavors of the other and to discuss various issues of concern to the Armenian Community, given that Assemblymember De Leon's district encompasses Little Armenia.

During their meeting, Assemblymember De Leon took the opportunity to personally invite the Prelate to participate in a special session of the Assembly on April 23rd, in commemoration of the Armenian Genocide.

The Prelate expressed his appreciation to the Assemblymember for his attention to Armenian issues and for initiating a special session each year in commemoration of the Genocide.

Assemblymember De Leon thanked the Prelate for his kind words and well wishes and reaffirmed the importance of continued collaboration.

Prior to his departure, the Prelate presented the Assemblymember with a memento and wished his success in his future endeavors.

ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԵՌՕՐԵԱՅ ՀԱՍԱԳՈՒՄԱՐ

Հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հօր, եւ կազմակերպութեամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան Կեդրոնական Մարմինին, անցնող շաբաթավերջին եռօրեայ համագումար մը տեղի ունեցաւ Հ.Ե.Դ. ճամբարին մէջ, Պիկ Փայն:

Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան վարեց աղօթքի պահեր. մասնակիցները հետեւեցան հոգեւոր ծրագիրներու,

մասնակցեցան զրոյցներու եւ ապրեցան հոգեւոր խորհրդածութեան պահեր:



կայքէջի լրատուութեան բաժինին մէջ):

Առաջնորդ
Սրբազանը ներկայ
եղաւ սոյն
համագումարին եւ
փոխանցեց իր
օրհնութիւնները:
Սրբազան Յոր
կ'ընկերանար Արժ.
Տ. Վազգէն Բիւյ.
Աթմաճեան:
(Համագումար
ին
մանրամասնութիւնն
ընդ տեսնել Ազգ.
Առաջնորդարանիս)

ACYA FIRST ANNUAL SPIRITUAL REVIVAL AND AWAKENING RETREAT

The Armenian Church Youth Association, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, held its first ever “Spiritual Revival & Awakening” camping retreat at the AYF Camp.

The event brought young, faithful Armenians from the local churches of the Western Prelacy together during the weekend of March 13, 2009. With the guidance of Very Rev. Fr. Barthev Gulumian, and dedicated members of the ACYA executive committee, fifty young Armenians came together from March 13th through the 15th at AYF Camp for prayer services, worship, testimonials, and educational and enlightening lectures.

The event was highlighted with the visit of the Prelate, who was accompanied by Rev. Fr. Vazken Atmajian, pastor of St. Mary's Church in Glendale. The Prelate conveyed his blessings and encouraged the youth and young adults alike to



grow spiritually and become more involved in various church activities in the years to come.

(Please visit the news section of our website for the full press release and photos).

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՖԵՐԱՅԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Շաբաթ, Մարտ 21-ի երեկոյեան ժամը 8-ին, Կլենտէյլի «Քարուսէլ» ճաշարանին մէջ, տեղի պիտի ունենայ Ֆերահեան Ազգային վարժարանի հանգանակային ճաշկերոյթը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր գնահատանքի եւ օրհնութեան խօսքը: Սրբազանին պիտի ընկերանայ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան:

FERRAHIAN HIGH SCHOOL FUNDRAISING BANQUET

On the evening of Saturday, March 21st, the fundraising banquet of Ferrahian High School will take place at Carousel Restaurant in Glendale.

The Prelate will attend and convey his blessings. Rev. Fr. Razmig Khatchadourian will accompany the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ «ՃԱՆ ԹԱՐԻԻՉ» ԶԵՌՆԱՐԿԻՆ

Շաբաթ, Մարտ 21-ի երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլի «Civic Auditorium» սրահին մէջ, պիտի տօնակատարուի թարիզահայութեան 4-րդ վերահանդիպման ձեռնարկը՝ «Ճան Թարիզ» անուան տակ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին. պիտի կատարէ սեղաններու օրհնութիւնը եւ փոխանցէ իր բարեմաղթութիւնները: Սրբազան Հօր պիտի ընկերանան Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան եւ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան:

ANNUAL BANQUET OF TAVRIZ ARMENIANS

On the evening of Saturday, March 21st, the 4th annual “Jan Tavriz” banquet of Iran’s Tavriz Armenians will take place at the Civic Auditorium in Glendale.

The Prelate will be present to offer the invocation and convey his blessings to the organization. Pastors of St. Mary’s Church Rev. Fr. Vazken Atmajian and Rev. Fr. Gomidas Torossian will accompany the Prelate.

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՌԵՏՈՒՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿ

Լոս Անճելըսի Հայ Ամերիկեան Առետուրի Գրասենեակի 10-րդ տարեդարձին առիթով, ճաշկերոյթ տօնակատարութիւն մը կազմակերպուած է, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 20 Մարտի երեկոյեան Կլենտըյլի Հիլթըն պանդոկին մէջ:

Ձեռնարկի ընթացքին գնահատանքի պիտի արժանանան գաղութիս մէջ յաջողութիւն արձանագրած անձնաւորութիւններ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան Ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան խօսքը:

ARMENIAN AMERICAN CHAMBER OF COMMERCE GALA

On the evening of Friday, March 20th, the 10th Anniversary Business Gala of the Armenian American Chamber of Commerce will take place at the Glendale Hilton.

The evening will feature an awards presentation during which prominent community members will be honored.

Rev. Fr .Vazken Atmajian will represent the Prelate and deliver the invocation.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՕՐԵՆԾԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԷՋ

Օրենճ շրջանի կաթողիկէ եկեղեցւոյ Առաջնորդարանի Նախաձեռնութեամբ, եւ հրաւերովը Թատ Պրաուն Եպիսկոպոսի, Հինգշաբթի, 19 Մարտի յետմիջօրէին, հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Կարտըն Կրովի St. Columban եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագի ընթացքին, Կաթողիկէ համայնքի հոգեւորականներէն Cirilo Flores արժանացաւ եպիսկոպոսական ձեռնադրութեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան Ներկայ եղաւ արարողութեան եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազանին

շնորհաւորութիւնները: Ներկայ էր նաեւ Օրէնճ Քառնթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Զրանդ Քիւյ. Երեցեան:

EPISCOPAL ORDINATION OF BISHOP-ELECT CIRILO FLORES

The Prelate had received an invitation from Bishop Tod Brown and Fr. Al Baca of the Catholic Diocese of Orange to attend the Episcopal ordination of Bishop-elect Cirilo Flores which took place on the afternoon of Thursday, March 19th at St. Columban Church in Orange County.

Very Rev. Fr .Barthev Gulumian attended on behalf of the Prelate and conveyed the Prelate's congratulations. He was accompanied by Rev. Fr. Hrant Yeretizian, Pastor of Forty Martyrs Church.

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԱՊԱՅՈՎՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒ

Հրաւերովը Լոս Անճելըսի Ոստիկանութեան, Զինգշաբթի, 26 Մարտի կէսօրին, ոստիկանութեան պատասխանատուներու եւ հոգեւորականներու միջեւ հանդիպում մը տեղի պիտի ունենայ Միշըն Զիլզի ոստիկանատան սրահին մէջ:

Հանդիպումին նպատակն է սերտ կապեր ստեղծել ոստիկանութեան եւ գաղութի հոգեւորականներուն միջեւ, ի խնդիր հարցերու դիմագրաւման եւ հանրութեան սպասարկման:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան եւ Ռաֆֆի Սարկաւազ Կարապետեան ներկայ պիտի ըլլան հանդիպումին:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, նմանապէս, Լոս Անճելըսի Ոստիկանութեան հրաւերով, Շըրմըն Օքս կեդրոնին մէջ, Թարզանա, նմանօրինակ հանդիպում մը տեղի պիտի ունենայ, «Hate Crime Summit» թեմայով:

Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան, յանուն Առաջնորդ Սրբազան Զօր ներկայ պիտի ըլլայ հանդիպումին, ընկերակցութեամբ Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան ներկայացուցիչին:

PRELATE TO BE REPRESENTED AT LAPD MEETING AND SUMMIT

The Prelate has received an invitation from the Los Angeles Police Department to attend a Police-Clergy Council meeting, the purpose of which is to foster a relationship between police and clergy to reduce crime and improve our communities. The event will take place at the Mission Hills station at noon on Thursday, March 26th.

Rev. Fr. Vazken Atmajian and Chaplain Rafi Garabedian will attend on behalf of the Prelate.

In the evening, a Hate Education and Awareness Summit will take place at the Sherman Oaks Center for Enriched Studies in Tarzana. The summit has been organized by the LAPD, the San Fernando Valley Faith Coalition, and Councilman Dennis Zine.

Rev. Fr. Razmig Khatchadourian and a representative from the Holy Martyrs Board of Trustees will attend on behalf of the Prelate.
